# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/49 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**14.07.2020թ.**

**ք. Երևան**

10.07.2020-14.07.2020թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ «Հատակի էլեկտրական հովհար ոտնակով» ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/49 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ռ. Ներսիսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի պետի ժ/պ, |
| Ա. Գալստյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Վ. Պողոսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի պետի տեղակալ, |
| Ս. Քոչարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի գործավար-օպերատոր, |
| Հ. Կճայան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի Կոմերցիոն բաժնի տեսուչ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ռ. Ներսիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:
8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ.-ի հուլիսի 14-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Հատակի էլեկտրական հովհար ոտնակով | 160000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02286211, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս.Տարոնցու նրբ. 3 շ. 16 բն., Հեռ.՝ +(374)91026222, էլ. հասցե՝ profshin2020@gmail.com |
| 2 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01569235, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ջավարյան 57/19, Հեռ.՝ 055-656556, էլ. հասցե՝ karlos.baghramyan@gmail.com |
| 3 | «ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» Ա/Ձ | ՀՎՀՀ՝ 20017691, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Աշտարակի խճ 10/7, Հեռ.՝ +374 99 67 77 66, էլ. հասցե՝ nshakhnazaryan0@gmail.com |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակիցների.

1. «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ - Հավելված 1-ում նշված հեռախոսահամարից մեկ թիվ բացակայում է, իսկ Հավելված 1.1-ով ներկայացված չեն վերջինիս կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

2. «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ - Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում վերջինիս կողմից առաջարկվող երաշխիքային սպասարկման ժամկետը հստակ սահմանված չէ:

3. «ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» Ա/Ձ - Հավելված 1.1-ով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում վերջինիս կողմից առաջարկվող երաշխիքային սպասարկման ժամկետը հստակ սահմանված չէ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Հատակի էլեկտրական հովհար ոտնակով | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | 160000 | 110000 | 22000 | 132000 |
| | | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | | 161000 | 0 | 161000 |
| | | «ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» ԱՁ | | 158000 | 0 | 158000 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,
2. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. մասնակիցներիի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | բավարար |
| 1 | «ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» Ա/Ձ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափ աբաժ նի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցր ած տեղ | Անվանում | | |
| 1 | 1 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | X | 110000 |
| | 3 | «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ | | 161000 |
| | 2 | «ՆՈՐԱՅՐ ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ» ԱՁ | | 158000 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկները և պայմանագրերի նախագծերը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջիններիս կողմից պայմանագրերը չստորագրելու և պայմանագրերի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Ռ. Ներսիսյան |
| **Անդամներ** | | Ա. Գալստյան |
| | | Վ. Պողոսյան |
| | | Ս. Քոչարյան |
| | | Հ. Կճայան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |